Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար
Մ. Գ. Բարսեղյան

ԿԱՆՈՆՆԵՐ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Երևան 2024թ.

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) սովորողների ներքին կարգապահության կանոնները (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության սահմանադրության, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Համալսարանի կանոնադրության, «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» և այլ իրավական ակտերի հիման վրա:

2. Սույն կանոններով սահմանվում են Համալսարանում ուսումնառության ընթացքում բոլոր ձևերով և աստիճաններում սովորողների՝ ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, հետազոտողների (այսուհետ՝ Սովորող) ուսումնական ռեժիմը, Սովորողների հիմնական իրավունքները, պարտականությունները, վարքագիծը, խրախուսանքի ու կարգապահական պատասխանատվության միջոցները, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոններով և ուսումնառության մասին պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված պարտականությունների խախտման դեպքում Սովորողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառման՝ ներառյալ Համալսարանից հեռացման և պայմանագիրը լուծելու հիմքերը, դեպքերը և կարգը:

3. Սույն կանոնների նպատակն է խթանել Համալսարանի ակադեմիական միջավայրում անհատի իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումը, կարգապահությունը, զարգացնել անհատական պատասխանատվության սկզբունքի կիրառումը:

4. Համալսարանի ավագ դպրոցի և միջին մասնագիտական կրթության քոլեջի սովորողների կարգապահական գործընթացներն իրականացվում են դպրոցի և քոլեջի կարգապահական կանոններով:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

5. Համալսարանի ու սովորողի միջև հարաբերությունները կարգավորվում և ուսումնառության գործընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն Կանոնների և այլ իրավական ակտերի, պայմանագրի հիման վրա:

6. Պայմանագիրը համաձայնություն է Սովորողի և Համալսարանի միջև: Ըստ պայմանագրի՝ Համալսարանը կազմակերպում է Սովորողների մասնագիտական կրթության ուսումնական գործընթացները՝ համապատասխան կրթական ծրագրերով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոններով և ուսումնառության պայմանագրով սահմանված կարգով ու պայմաններով, իսկ Սովորողները պարտավորվում են կատարել սույն կանոններով և պայմանագրով սահմանված պարտականություններն ու ուսումնառության վերաբերյալ Համալսարանի կրթական առաջադրանքները՝ պահպանելով համակեցության կանոնները:

7. Համալսարանի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության առկա կամ հեռակա ուսուցման բոլոր ձևերով Սովորողների մասնակցությունը կրթական ծրագրերով իրականացվող գործընթացներին, այդ թվում դասընթացներին՝ պարտադիր է:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ

8. Համալսարանի ուսումնական ռեժիմը՝ Սովորողների կարգապահությունը և ուսումնառության համար կազմակերպչական բարենպաստ պայմաններ ապահովելու, ուսումնառությունն արդյունավետ իրականացնելու, կրթական պարտականությունները ժամանակացույցով սահմանված ժամկետներում կատարման ապահովումն է:

9. Համալսարանում ուսումնական տարին բաղկացած է երկու կիսամյակներից և սկսվում ու ավարտվում է ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

10. Համալսարանում կրթական գործընթացները ներառում են՝

1) մասնագիտական և լրացուցիչ դասախոսությունները,
2) գործնական պարապմունքները,
3) հաշվեգրաֆիկական աշխատանքները,
4) կուրսային աշխատանքները և նախագծերը,
5) լաբորատոր պարապմունքները,
6) ինքնուրույն աշխատանքները,
7) խորհրդատվությունը,
8) ուսումնական և մասնագիտական պրակտիկաները,
9) ընթացիկ (և, կամ) կիսամյակի ստուգարքներն ու քննությունները,
10) ամփոփիչ (ավարտական) ատեստավորման աշխատանքները և դրանց հրապարակային պաշտպանությունը:

11. Դասընթացները կազմակերպվում են՝ ըստ դասացուցակի: Այն կազմվում է մեկ կիսամյակի համար և հաստատվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Դասացուցակը սահմանված կարգով հրապարակվում է ուսումնական գործընթացները սկսելուց առնվազն 5 օր առաջ:

12. Դասընթացների պարապմունքները իրականացվում են շաբաթը 5 օր՝ երկուշաբթիից ուրբաթ, բացառությամբ օրենքով սահմանված տոնական, հիշատակի և հանգստյան օրերի: Անհրաժեշտության դեպքում շաբաթ օրերին կարող են կազմակերպվել դասընթացներից պարապմունքներ:

13. Համալսարանում դասընթացների պարապմունքները սկսվում են ժամը 9^{30}-ին, ավարտվում են դասացուցակով նախատեսված վերջին դասընթացի պարապմունքի ավարտով: Համալսարանում դասընթացների պարապմունքները կարող են կազմակերպվել նաև հերթափոխով:

14. Դասընթացների պարապմունքների տևողությունը սահմանվում է ակադեմիական ժամերով՝ մեկ ակադեմիական ժամի տևողությունը 40 րոպե է: Դասընթացի մեկ պարապմունքը միավորում է 2 ակադեմիական ժամ՝ 80 րոպե: Դասընթացի մեկ պարապմունքի (2 ակադեմիական ժամ) ավարտից հետո սահմանվում է դասամիջոց՝ 10 րոպե, իսկ երկրորդ և երրորդ պարապմունքների միջև՝ 20 րոպե:

15. Դասընթացները կազմակերպվում են ակադեմիական խմբերով: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է ավագ, ով իր խմբին տեղեկացնում է դեկանի հանձնարարությունների ու ցուցումների մասին և ապահովվում է կապը դեկանատի հետ:

16. Դասընթացների պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու նպատակով պարապմունքները սկսվելուց հետո մասնաշենքերում պահպանվում է լռություն: Ոչ ոքի չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, այդ ընթացքում մտնել լսարան և (կամ) դուրս գալ լսարանից, եթե չկա դրա անհետաձգելի անհրաժեշտությունը:

IV. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Համալսարանի Սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով, սույն կանոններով և Սովորողի հետ կնքված պայմանագրով:

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները պահպանվում են ուսումնառության ամբողջ ընթացքում:

18. Համալսարանի սովորողն իրավունք ունի՝

1) մասնակցելու իրեն կրթության բովանդակության ձևավորմանը (դասընթացների, մասնագիտացման, ավարտական աշխատանքի թեմայի ընտրությանը),

2) տեղեկացված լինելու գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման սկզբունքներին, կանոններին և կառուցակարգերին,

3) մասնակցելու կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի որակի և ակադեմիական կազմի գնահատմանը,

4) մասնակցելու Համալսարանի կառավարմանը՝ օրենքով կամ Համալսարանի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններ,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Համալսարանում սահմանված կարգին համապատասխան՝ տեղափոխվել սովորելու համալսարանի մեկ այլ կրթական ծրագրով՝ պահպանելով նախորդ կրթական ծրագրում կուտակած կրեդիտները,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ ուսումնառելու համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում,

8) ստանալ ուսուցման ծառայություններ, զբաղվել գիտական հետազոտություններով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել ուսումնառությունը,

9) ստանալ իր ուսումնակրթական ծրագրով նախատեսված կրթություն, գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից չափանիշներին համապատասխան գիտելիքներ,

10) Համալսարանի նախաձեռնությամբ՝ անվճար կամ վճարովի հիմունքներով յուրացնել ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է Համալսարանի ուսումնակրթական ստորաբաժանման կողմից,

11) մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,

12) քննաշրջանի քննությունների և ստուգարքների ժամանակացույցի պատրաստման ժամանակ ներկայացնել առաջարկություններ,

13) անվճար օգտվել Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

14) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, ծանոթանալ Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոններին և Համալսարանի գործունեությունը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերին,

15) ազատ կերպով արտահայտել սեփական կարծիքն ու համոզմունքները, բողոքարկել Համալսարանի կառավարման մարմինների որոշումները, ռեկտորի հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված կարգով,

16) պաշպանված լինել ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, ակադեմիական և այլ աշխատողների ու Սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որոնցով կարող են խախտվել Սովորողի իրավունքները կամ արատավորվել նրա պատիվն ու արժանապատվությունը,

17) ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու ուսումնական արձակուրդում նվազագույնը 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ստանալու ակադեմիական արձակուրդ,

19) ուսման բարձր առաջադիմության, գիտահետազոտական աշխատանք-ներին մասնակցելու, հասարակական աշխատանքներին գործուն մասնակցության համար և մրցույթներում հաղթելու դեպքում սահմանված կարգով ստանալ բարոյական և (կամ) նյութական խրախուսանք,

20) միավորվել ուսանողական հասարակական կազմակերպություններում (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլ կազմակերպություններ), մասնակցել դրանց գործունեությանը,

21) կրթությունը ցանկացած պատճառներով ընդհատելու դեպքում սահմանված կարգով վերականգնել ուսանողական իրավունքները,

22) սահմանված կարգով և չափով օգտվել պետական, անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակից, դրամաշնորհից, ուսանողական նպաստից, ուսումնառության վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման, ուսանողի կարգավիճակի փոխատեղման իրավունքներից,

23) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան (դրանցից մեկը՝ հեռակա),

24) իր իրավունքների իրականացման և պարտականությունների վերաբերյալ ծագած խնդիրները լուծելու համար դիմել՝ ֆակուլտետի դեկանին, պրոռեկտորին, անհրաժեշտության դեպքերում նաև Համալսարանի ռեկտորին,

25) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

19. **Համալսարանի Սովորողը պարտավոր է.**

1) կատարել համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոններով, պայմանագրով և այլ ակտերով սահմանված պարտականությունները, պահպանել կարգապահությունը և համակեցության համընդհանուր ճանաչում ունեցող կանոնները,

2) Համալսարանի հետ կնքելու պայմանագիր,

3) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները՝ կրթական ծրագրերի պահանջները, ուսումնական պլանով, առարկայական ծրագրերով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթներն ու բոլոր այլ առաջադրանքները, դրանց հետ կապված հանձնարարությունները,

4) տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին,

5) մասնակցել ժամանակացույցով նախատեսված դասընթացների դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և պրակտիկային,

6) դասընթացների պարապմունքներին չներկայանալու դեպքում ֆակուլտետի դեկանատ ներկայացնել չմասնակցելու պատճառների մասին փաստաթղթային հիմքերը՝ բացակայելուց հետո դասի ներկայանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում,

7) ինքնուրույն ծանոթանալ ուսումնառության հետ կապված բոլոր փաստաթղթերին (ուսումնական գործընթացների ժամանակացույցներ, տարբեր փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, փոխատեղման հրամաններ և այլն) համալսարանի տեղեկատվության տարածման համապատասխան միջոցներից (բուհի կայքէջ, ֆակուլտետի հայտարարությունների ցուցափեղկ),

8) իր վարքով և բարձր առաջադիմությամբ նպաստել Համալսարանի գրավչության, հեղինակության բարձրացմանը,

9) Համալսարանի հետ կնքված պայմանագրի համաձայն սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը,

10) բացառել գրագողությունը կամ այլ անձի կողմից կատարված ուսումնական, գիտական աշխատանքների ներկայացումը որպես իր կողմից կատարված,

11) բացառել գիտելիքների ստուգման գործընթացներում ուրիշ սովորողի փոխարեն ներկայանալը կամ մասնակցելը,

12) բացառել դասերից անհարգելի ուշացումը: Անհարգելի ուշացում է համարվում դասը սկսելու համար համալսարանի կողմից սահմանված ժամանակացույցի խախտմամաբ 15 րոպե ուշացումով դասի ներկայանալը՝ առանց համապատասխան դեկանատին նախապես նախազգուշացնելու,

13) բացառել դասերից անհարգելի բացակայությունները:

ա. անհարգելի բացակայություն է համարվում առանց հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դասերին չներկայանալը,

բ. հարգելի են համարվում դասընթացների պարապմունքներից հիվանդության պատճառով բացակայության, ինչպես նաև ռեկտորատի որոշմամբ ընտանեկան, գիտական և մարզամշակութային միջոցառումներին մասնակցության և այլ բացառիկ դեպքերը՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթային հիմքերով,

գ. ուսանողները փաստաթղթային հիմքերը դեկանին են ներկայացնում բացակայելուց հետո դասի ներկայանալուց ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում

14) բացառել ուսումնական գործընթացին ալկոհոլային խմիչքներ կամ թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործած վիճակում ներկայանալը,

15) բացառել թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ներսբերումը համալսարան կամ դրան պատկանող տարածքներ

16) կիրառել համալսարանի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստը և ամենօրյա պարբերականությամբ ստուգել այն: Համալսարանի կողմից սովորողի էլեկտրոնային փոստով արված ծանուցումը համարվում է սովորողին պաշտոնապես տրված ծանուցում,

17) հոգատարությամբ և խնամքով վերաբերվել Համալսարանի գույքին ու տեխնիկական սարքավորումներին,

18) աջակցել խմբի ավագին և կատարել գործավարության ու ուսումնառության հետ կապված նրա պահանջները,

19) հարգել Համալսարանի աշխատողների, դասախոսների, Սովորողների պատիվն ու արժանապատվությունը, ցուցաբերել հարգալից բարեկիթ վերաբերմունք ուսումնառության ողջ ընթացքում,

20) Համալսարանի ուսումնական, ուսումնաարտադրական և այլ կառույցներում պահպանել մաքրություն,

21) բարեխղճորեն կատարել Սովորողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և սույն Կանոնների պահանջները, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի, ֆակուլտետի գիտական խորհրդի և դեկանի որոշումներն ու կարգադրությունները,

22) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոններով և պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

V. ՍՈՎՈՐՈՂԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

20. Համալսարանը խրախուսում է ակադեմիական բարձր առաջադիմություն և հասարակական աշխատանքներին, մրցույթներին և օլիմպիադաներին գործուն մասնակցություն ցուցաբերած ու կարգապահ Սովորողին:

21. Սովորողի կողմից ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերելու, դասընթացներին, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին գործուն մասնակցության, համակեցության կանոնները պահպանելու, բարձր վարքի, նախաձեռնությունների և ստեղծագործական ունակությունների համար սահմանվում են խրախուսանքի հետևյալ տեսակները՝

1) շնորհակալության հայտարարում,
2) միանվագ դրամական պարգևատրում,
3) կրթաթոշակի սահմանում և տրամադրում,
4) ուսումնառության վճարի մասնակի փոխհատուցում,
5) պատվոգրով պարգևատրում,
6) հուշանվերով պարգևատրում:

22. Սովորողին խրախուսելու և սույն Կանոնների 21 կետով սահմանված խրախուսանքի տեսակը դեկանի և ուսանողական խորհրդի ներկայացմամբ որոշում է Համալսարանի ռեկտորը, որի մասին արձակում է հրաման:

23. Սովորողին խրախուսելու մասին հրամանը հրապարակվում է Համալսարանի կայքում:

VI. ՍՈՎՈՐՈՂԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

24. Համալսարանի գույքը վնասելու դեպքում Սովորողը կարող է կրել նյութական պատասխանատվություն: Անչափահաս Սովորողի փոխարեն նյութական պատասխանատվություն է կրում նրա օրինական ներկայացուցիչը:

25. Նյութական պատասխանատվության տեսակներն են՝

1) վնասի դրամական փոխհատուցում,
2) նույն տեսակի և որակի գույքի տրամադրում,
3) վնասված գույքի վերանորոգում:

26. Սովորողը նյութական պատասխանատվություն է կրում, եթե՝

1) վնասը պատճառվել է սովորողի անօրինական գործողությունների հետևանքով,
2) առկա է պատճառական կապ սովորողի անօրինական գործողության և վնասի առաջացման միջև,
3) առկա է վնաս պատճառող սովորողի մեղքը:

27. Սովորողը պարտավոր է հատուցել իր մեղքով Համալսարանին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է.

1) Համալսարանի գույքը փչացնելու հետևանքով կատարված ծախսերից,
2) նյութական արժեքները ոչ պատշաճ օգտագործելու հետևանքով,
3) լաբորատոր աշխատանքներն անփույթ կատարելու հետևանքով,
4) գրադարանից ստացած գրականությունը չվերադարձնելու հետևանքով:

VII. ՍՈՎՈՐՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. Սովորողի կարգապահական պատասխանատվությունը նպատակաուղղված է կրթական գործառույթների իրականացման արդյունավետության, ուսման առաջադիմության, ունակությունների ու հմտությունների բարձրացմանը, բարձրորակ մասնագետների պատրաստմանը, կարգապահության խախտումների կանխարգելմանը:

29. Կարգապահությունը Համալսարանի կանոնադրությամբ, ուսումնառության պայմանագրով և սույն Կանոններով սահմանված պարտականությունների կատարումն է: Սովորողի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կարող է կիրառվել կարգապահական խախտում կատարելու դեպքերում: Կարգապահական խախտման համար պատասխանատվությունը սովորողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումն է:

30. Կարգապահական խախտում է համարվում Համալսարանի կանոնադրությամբ, ուսումնառության պայմանագրով և սույն Կանոնների 19-րդ կետով սահմանված հիմնական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ անբավարար առաջադիմություն ցուցաբերելը:

31. Սովորողը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել, ընդհուպ հեռացվել Համալսարանից սույն կանոնների 33-րդ, 34-րդ և 35-րդ կետերով սահմանված դեպքերում:

32. Կարգապահական խախտման դեպքում Սովորողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ տույժերը՝

1) նախազգուշացում կամ ուսուցման ծառայությունների մատուցման դադարեցում կամ համալսարանի միջոցների հաշվին սովորողի ուսման վարձի մասնակի փոխհատուցման (զեղչ) դադարեցում:

Ուսուցման ծառայությունները դադարեցվում են, եթե վճարովի հիմունքներով սովորողը սահմանված ժամկետում չի վճարել նախատեսված ուսման վարձը:

Համալսարանի միջոցների հաշվին Սովորողի ուսման վարձի փոխհատուցումը դադարեցվում է պարբերաբար անհարգելի բացակայությունների կամ անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու կամ համալսարանի ռեկտորատի եզրակացությամբ՝ այլ դեպքերում:

2) նկատողություն,

3) խիստ նկատողություն,

4) համալսարանից հեռացում (պայմանագրի լուծում):

33. Սովորողին կարող է **նկատողություն** հայտարարվել, եթե՝

1) ուսումնական պլանով և ժամանակացույցով նախատեսված ժամկետներում չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Համալսարանի կանոնադրությամբ, պայմանագրով և սույն կանոններով սահմանված պարտականությունները՝ կրթական ծրագրով նախատեսված առաջադրանքները՝ հաշվեգրաֆիկական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները, կուրսային աշխատանքները, կուրսային նախագծերը և սահմանված կարգով պրակտիկային չմասնակցելը,

2) կատարել է այնպիսի գործողութուն, որի հետևանքով վնաս է պատճառվել համալսարանի գույքին,

3) հրաժարվել է կատարել Սովորողների վերաբերյալ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի որոշումներն ու կարգադրությունները:

Սույն ենթակետի իմաստով հրաժարում է համարվում, եթե նախազգուշացվելուց հետո սովորողը շարունակում է չկատարել նշված ակտերը,

4) դիտավորությամբ ձախողել է դասընթացները կամ կատարել է այնպիսի գործողություն, որի հետևանքով խախտվել է դասընթացների բնականոն ընթացքը,

5) համալսարանի տարածքում ծխել կամ օգտագործել է ոգելից խմիչք կամ թմրամիջոցներ կամ զբաղվել է թղթախաղով կամ ոչ սթափ վիճակում ներկայացել է դասընթացներին կամ ստուգարքներին կամ քննություններին,

6) խոչընդոտել է ակադեմիական խմբի ավագի գործունեությանը,

7) համալսարանի աշխատողի կամ դասախոսի կամ Սովորողի նկատմամբ ցուցաբերել է կոպիտ կամ անհարգալից վերաբերմունք,

8) ուսումնական կիսամյակի ընթացքում դասընթացների պարապմունքներից անհարգելի բացակայությունների ժամաքանակը գերազանցել է 100 ակադեմիական ժամը:

9) աղտոտել է համալսարանի տարածքը,

10) խախտում կատարելու համար նախազգուշացվելուց հետո կրկին կատարել է նույն խախտումը:

34. Սովորողին կարող է **խիստ նկատողություն** հայտարարվել, եթե՝

1) Սույն կանոնների 33-րդ կետով սահմանված խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո հաջորդ կիսամյակի ընթացքում կրկին կատարել է նույն խախտումը,

2) ուսումնական կիսամյակի ընթացքում դասընթացների պարապմունքներից անհարգելի բացակայությունների ժամաքանակը գերազանցել է 140 ակադեմիական ժամը:

35. Սովորողը կարող է **հեռացվել** համալսարանից եթե՝

1) սույն կանոնների 33-րդ և 34-րդ կետերով սահմանված խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո հաջորդ կիսամյակի ընթացքում կրկին կատարել է նույն խախտումը,

2) ցուցաբերել է ակադեմիական անբավարար առաջադիմություն՝ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով չի հավաքել սահմանված չափով գումարային կրեդիտ,

3) վճարովի հիմունքերով Սովորողը Համալսարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ ուսումնական տարվա (կիսամյակի) ուսման վարձը վճարելու համար նախազգուշացվելուց հետո սահմանված լրացուցիչ ժամկետում չի վճարել ուսման վարձը,

4) ուսումնական կիսամյակի ընթացքում դասընթացների պարապմունքներից անհարգելի բացակայությունների ժամաքանակը գերազանցել է 180 ակադեմիական ժամը:

Սույն ենթակետով սահմանված դեպքում Սովորողը համալսարանից հեռացվում է ռեկտորատի եզրակացության գնահատմամբ,

5) սահմանված կարգով անցկացվող պրակտիկային չի մասնակցել,

6) ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի նախնական կամ հրապարակային պաշտպանության ընթացքում աշխատանքում բացահայտվել է գրագողության դեպք,

7) կատարել է այնպիսի արարք, որով էական վնաս է հասցրել համալսարանի հեղինակությանը և/կամ գրավչությանը:

Սույն ենթակետի իմաստով վնաս է համարվում, երբ սովորողի գործողությունների կամ անգործության հետևանքով հրապարակվել է համալսարանի հեղինակությունը արատավորող տեղեկություններ: Արատավոր տեղեկությունների հատկանիշները որոշվում է համալսարանի ռեկտորատի եզրակացությամբ,

8) մեկ ուսումնական տարվա ընթացքում ունի երկու և ավելի չմարված կարգապահական տույժ,

9) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավաճռով դատապարտվել է ազատազրկման:

36. Սովորողի մեկ կարգապահական խախտման համար կարող է նշանակվել մեկ տույժ: Եթե Սովորողը միաժամանակ կատարել է մի քանի խախտում, ապա կարգապահական տույժը կիրառվում է ավելի ծանր խախտման համար:

37. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժը կարող է կիրառվել կարգապահական վարույթ հարուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում՝ չհաշված ուսումնական գործընթացներից Սովորողի բացակայության ժամանակաշրջանը:

38. Եթե կարգապահական տույժի ենթարկվելուց հետո՝ հաջորդ ուսումնական կիսամյակի ընթացքում Սովորողը կրկին չի ենթարկվում նոր կարգապահական պատասխանատվության, նախկին տույժը համարվում է մարված:

39. Կարգապահական տույժը կարող է վաղաժամկետ հանվել Համալսարանի ռեկտորի հրամանով՝ Սովորողի կամ նրա ուսումնակրթական ստորաբաժանման ղեկավարի պատճառաբանված միջնորդությամբ:

40. Ուսումնական գործընթացի (ուսումնառության) հետ կապված Համալսարանի կանոնադրությամբ կամ ուսումնառության պայմանագրով կամ սույն Կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Սովորողին կարգապահական տույժի ենթարկելուց, այդ թվում՝ Համալսարանից հեռացնելուց հետո, վերականգնելու դեպքերում Սովորողը չի ազատվում կրթական ու դասընթացների ծրագրերով, ուսումնական պլանով և ուսումնական գործընթացի լրացուցիչ ժամանակացույցով նախատեսված գործառույթներն ու առաջադրանքները կատարելու պարտականություններից և ուսման վարձի պարտքի վճարումից:

41. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարել է անհաղթահարելի ուժի ազդեցության (ֆորս-մաժոր) հետևանքով կամ խախտումը կատարելուց հետո՝ այն բացահայտելու օրվանից անցել է 6 ամիս, կամ խախտումը բացահայտելուց հետո վեց ամսվա ընթացքում Սովորողը գտնվել է հիվանդության, ակադեմիական կամ հղիության և ծննդաբերության կամ ուսումնական արձակուրդում:

VIII. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Սույն Կանոններով սահմանված դեպքերում կարգապահական խախտման համար Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավունք ունի Համալսարանի ռեկտորը՝ խախտման վերաբերյալ ապացույցների գնահատմամբ: Ապացույցներ են համարվում ցանկացած փաստական տվյալներ, որոնց հիման վրա հաստատվում կամ չի հաստատվում Սովորողի կողմից կատարած խախտումը:

43. Խախտում կատարած սովորողի նկատմամբ կարգապահական տույժը հայտարարում է պատճառաբանված հրամանով: Հրամանում նշվում են տույժ կիրառելու փաստական և իրավական հիմքերը, հղում կատարելով սույն կանոնների համապատասխան դրույթներին:

44. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հիմքերն են սովորողի կողմից կատարած կարգապահական խախտման մասին ֆակուլտետի դեկանի կամ ամբիոնի վարիչի կամ այլ ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիրը կամ այլ անձանցից ստացված հաղորդումը կամ այլ տեղեկությունները (այսուհետ՝ հաղորդում) խախտումը հիմնավորող ապացույցները:

45. Ներկայացված հաղորդումը ռեկտորը հանձնում է խախտում կատարած սովորողի ֆակուլտետի դեկանին սովորողի վերաբերյալ նյութեր պատրաստելու համար:

46. Ֆակուլտետի դեկանը սովորողի կարգապահության խախտման վերաբերյալ հաղորդումը ստանալուց հետո հավաքում է խախտման վերաբերյալ ապացույցներ, կազմում է տեղեկանք սովորողի ակադեմիական առաջադիմության, ուսումնական պարապունքների մասնակցության, վարքի, հասարակական աշխատանքներին մասնակցության մասին, դրանք ներկայացնում սովորողին և նրանից պահանջում հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր բացատրություն:

47. Կարգապահական խախտում կատարած Սովորողը, նրա օրինական ներկայացուցիչը իրավունք ունեն կարգապահական վարույթի նյութերն ստանալուց հետո վարույթի վերաբերյալ տալ բացատրություններ, ներկայացնել փաստեր, ապացույցներ և առարկություններ, հարուցել միջնորդություններ:

48. Եթե Սովորողը չի ներկայացնում բացատրություն, դեկանը կազմում է արձանագրություն՝ բացատրություն չներկայացնելու մասին:

49. Ֆակուլտետի դեկանը կարգապահական խախտման մասին պատրաստված նյութերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է իրավաբանական բաժին:

50. Իրավաբանական բաժինը ներկայացված հաղորդման և նյութերի հիման վրա կազմում է եզրակացություն սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հիմանավորվածության և իրավաչափության մասին և երեք աշխատանքային օրվա ընթացքում նյութերի հետ միասին հանձնում է համալսարանի ռեկտորին, սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու ընթացքը լուծելու համար:

51. Կարգապահական խախտման վերաբերյալ նյութերը Համալսարանի ռեկտորին հանձնումը համարվում է կարգապահական վարույթի հարուցում:

52. Համալսարանի ռեկտորը գնահատելով Սովորողի կարգապահական խախտման վերաբերյալ նյութերը, ապացույցները, խախտման պատճառներն ու խախտում կատարած Սովորողի մեղքի աստիճանը, նրա բնութագիրը, ակադեմիական առաջադիմությունը, վարքը, կարգապահական խախտման բնույթն ու աստիճանը, խախտման հետևանքները և այլ հանգամանքները, իրավաբանական բաժնի եզրակացությունը,

1) եթե գտնում է, որ Սովորողի կատարած խախտումն աննշան է, նախազգուշացնում է Սովորողին կամ կարճում է կարգապահական վարույթը,

2) եթե գտնում է, որ առկա են սովորողին նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարելու մասին հիմքեր, հրաման է արձակում Սովորողի նկատմամբ համապատասխան կարգապահական տույժ կիրառելու մասին,

3) եթե գտնում է, որ առկա են Սովորողին համալսարանից հեռացման հիմքեր, հանձնարարում է համապատասխան ֆակուլտետի դեկանին՝ Սովորողի կատարած խախտման մասին զեկուցել Համալսարանի ռեկտորատի առաջիկա նիստում: Ռեկտորատի նիստի օրվա և ժամի մասին Սովորողին ծանուցում է համապատասխան ֆակուլտետի դեկանը: Ռեկտորատը քննարկում է Սովորողին Համալսարանից հեռացնելու հարցը ռեկտորատի նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված Սովորողի մասնակցությամբ և/կամ բացակայությամբ և արդյունքների հիման վրա համապատասխան եզրակացություն ներկայացնում ռեկտորին: Ռեկտորատի եզրակացության հիման վրա ռեկտորը հրաման է արձակում Սովորողին համապատասխան կարգապահական տույժի ենթարկելու մասին:

53. Սովորողին կարգապահական տույժի ենթարկելու մասին ռեկտորի հրամանը երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում է Սովորողին և հրապարակվում է Համալսարանի կայքում:

54. Սովորողին Համալսարանից հեռացնելու դեպքում Ռեկտորի հրամանով լուծվում է Սովորողի հետ կնքված պայմանագիրը:

55. Կարգապահական տույժ նշանակելու մասին ռեկտորի հրամանը կարող է բողոքարկվել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված կարգով՝ հրամանն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

56. Սույն Կանոնները հաստատվում, փոփոխվում և լրացվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, վավերացվում՝ Ռեկտորի ստորագրությամբ և հրապարակվում Համալսարանի կայքում:

57. Սույն Կանոններն ուժի մեջ է մտնում 2024թ. սեպտեմբերի 1-ից:

58. Սույն կանոնները ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցված է ճանաչվում համալսարանի գիտական խորհրդի 2023թ. հունվարի 13-ի թիվ 01-01/23 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի սովորողների ներքին կարգապահության կանոնները:

59. Սույն Կանոնները՝ ուժի մեջ մտնելուց հետո, տարածվում են Համալսարանի բոլոր Սովորողների վրա:

60. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոններում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Գիտական քարտուղար՝ **Լ.Հ. Լևոնյան**

10.07.2024թ.
Գիտխորհրդի որոշում № 01/07/24